

**ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ  
ՎԱԻՆԲԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ  
ՆՈՐԱԳՈՅՆ ԳԻՒՏՈՎ ՄԸ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ**

Պրոֆէսօր Roberts, Օքսֆորդի St. John's Collegeէն, մասնագէտներն ու գիտական աշխարհը շահագրգռող մենագրութիւն մը հրատարակեց վերջերս մեծ խնամով ու ան նախընթաց շքեղութեամբ, Լոյս ընծայուած վաւերագիրը պապիւրոս մըն է, զոր British Museumի նախկին վերակացուն և պապիւրոսագիրտութեան ու նոր կտակարանի քընդադառուութեան յայտնի մասնագէտ Sir Frederick Kenyon նոր կտակարանի մինչև այնօր ծանօթ մամեսակին պատահիկներէն մին կը համարի:

Ասկէ առաջ ծանօթ էին Սինէական ու Վատիկանեան հռչակաւոր ձեռագիրները՝ գրուած Չորրորդ դարու առաջին կէսին: Նոյնինքն Sir Frederick Kenyon 1933ին հրատարակած էր արդէն մաս մը Chester Beattyի սեպական պապիւրոսներու հաւաքածոյէն, որոնք Երրորդ դարու առաջին կէսին կը պատկանին:

Վերին Եգիպտոսի Օքսիրինքուս (Բէն-Նէզա) հին քաղաքի տեղէն գտնուած է խնդրոյ առարկայ այդ պապիւրոսը, զոր 1920ին գնած է Պրոֆէսօր P. Grenfell: Այդ պատասխիկը օւնի մէկ քառակուսի տասնորդամեկրէն քիչ մը աւելի մեծութիւն: Առաջին էջին վրայ կան Յովհաննու Աւետարանի ԺԸ. գլխուն 31-33 համարներէն ու միւս էջին վրայ՝ յոյն գլխուն 37-38 համարներէն մասեր (Յիսուս Պիղատոսի առջև), ընդամենը 88 հղծուած տողեր, որոնցմէ շատերը կը պարունակեն հպիւ ընթեռնելի քանի մը տառեր: Մասնագէտներու կարծիքով այդ պապիւրոսը, զոր երկար ու համբերատար ճիզերով կարելի եղած է լուծել, առանց ունէ կասկածի, կը համարին մինչև Երկրորդ դարու առաջին կէսը:

Երբ ուշադրութեան առնուի՝ թէ այս հնագոյն պատասխիկը գտնուած է Եգիպտոսի համեմատաբար մեկուսացեալ մէկ մասին մէջ, որ նկատելի հեռաւորութիւն մը օւնի Յովհաննու Աւետարանի գրի առնուած վայրէն, այն տանն վճռականապէս կը հաստատուի անանկութիւնը այն առարկութեան,

որ այնքան միտքեր պղտորած է ու կը պըղտորէ տակաւին: Անոնք կ'առարկին թէ Աւետարաններու հնագոյն ձեռագիրներու գրչութեան ժամանակի ու Աւետարանական եզելութեանց միջև գոյութիւն ունեցող մեծ տնջրպետը կասկածի տակ կը ձգէ անոնց վաւերականութիւնը: Պրոֆ. Robertsի գիւտը հիմէն կը խախտէ այդ առարկութիւնը: Միւս կողմէ անիկա կ'ապացուցանէ թէ Յովհաննու Աւետարանը գոյութիւն ունէր ու շրջաբերութեան մէջ էր Քրիստոսի 150 թուականէն առաջ, հետեւապէս ժամանակակից է այն սերունդին, որուն օրով գրուած է պապիւրոսը: Այս գիւտը շեշտակի հարուած մըն է ԺԹ. դարու բունապաշտներուն, որոնք կը ճգնէին արդարացիներէ շարքից Աւետարանի նկատմամբ իրենց կանխակալ կարծիքը՝ կասկածի տակ ձգելով անոր խմբագրութեան թուականը, որ, կ'ըսէին, համեմատաբար յիսնագոյն ժամանակի մը կը վերաբերի:

Թրգմ. Մ. Ն. Ն.

].



**ԾՈՐՀՈՒՄԻՔ ԵՆ ԾՈՍՔ**

Ինչպէս ոտք չէ որ կօօիկին համեմատ կը շինուի, այլ կօօիկը ոտքին համեմատ, նոյնպէս ոչ թէ մեր ընդգրկած կեանքի գաւնագան տեսակները այլ մեր հոգիներուն պիտակէ տալու հրաւիրութիւններն են որ աւելի կամ նուազ երջանիկ կը դարձնեն կեանքը:



Պէտք է որ երիտասարդը մեծապէս հոգ սանի չամփոփուիլ փոքրիկ օրջանակի մը մէջ համակրութիւններու, որոնցմէ դուրս անհրեթք ասելութիւններ եւ ապուս նախապատրուածներ միայն պիտի գտնէ. . . խելացի եւ բարի մարդը իր բոլոր միջոցներով պէտք է ջանայ ինքզինքն զուրս լինել եւ խելամուտ րլլալ արժանիքներուն այն բոլոր անձերուն եւ կուսակցութիւններուն, որոնց ամենեւն աւելի հսկանակ է իր նկարագիրը:

